

7287

Ա. Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎԻԼՏ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

632  
Բ-12

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1943

632  
E-12 *ny*

Ա. Ա. ԲԱԲԱՅԱՆ

**ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎԻԼՏ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ**

**2002**

**Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ԵՐԵՎԱՆ 1949**

**2011**

30718-42

Հողծողկոմասի Ագրոսեխնիկայի և Մեխանիզացիայի  
Վարչության հանձնարարությամբ Բամբակագործական  
Գիտահետազոտական կայանը ձեռնարկել է հրատարա-  
կել մի Եւրոպիական գիտահետազոտական քննարկ, որոնց  
բովում նաև բնկ. Ա. Բաբայանի սույն աշխատությունը:

Ներկա աշխատությունում ամփոփված են բամբա-  
կենու վիյս հիվանդության վերաբերյալ Հայաստանի  
Բամբակագործական Գիտահետազոտական կայանի,  
Ինչպես նաև մեր ռեսպուբլիկայից դուրս գտնվող ուրիշ  
գիտական ինստիտուտների և կայանների կողմից կա-  
տարված ուսումնասիրությունների արդյունքները:

**Հայաստանի Բամբակագործական  
Գիտահետազոտական կայանի  
Գիտական տնօրէնը**



1147  
42

13844-58

**ՎԻԼՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՊԱՏՃԱՌԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԸ**

Ուղիղ կես դար է անցել այն ժամանակվանից,  
երբ առաջին անգամ 1892 թվականին Հյուսիս-  
սային Ամերիկայի Միացյալ Նահանգներում գիտ-  
նական Ատկինսոնը հայտարարել և նկարագրել է  
բամբակենու վիրտ կամ թառամում հիվանդու-  
թյունը: Հետագայում այդ հիվանդութունը հայ-  
տարարվել է համարյա բոլոր բամբակացան եր-  
կրներում, որոնց թվում նաև Սովետական Միու-  
թյունում:

Վիրտը բամբակենու ամենավնասակար հի-  
վանդություններից մեկն է: Պաշտոնական տրվ-  
յալների համաձայն՝ 1926 թվականին Հյուսիս-  
սային Ամերիկայի Միացյալ Նահանգներում

վիլտի պատճառով տեղի է ունեցել 261.000 հակ բամբակի կորուստ, որը կազմում է ամբողջ բերքի 2,1<sup>0</sup>/<sub>10</sub>-ը:

Սովետական Միության մեջ վիլտ հիվանդութունն առանձնապես տարածված է և տնտեսական զգալի ֆլաս է պատճառում հին բամբակագործական շրջաններում՝ Միջին Ասիայում և Անդրկովկասում: 1933 թվականին կատարված հաշվառումների համաձայն՝ Սովետական Միությունում վիլտի պատճառած կորուստը կազմել է բամբակի ամբողջ բերքի 2,1<sup>0</sup>/<sub>10</sub>-ը:

Բամբակենու վիլտը զգալի չափով տարածված է և որոշ ֆլաս է պատճառում Սովետական Հայաստանում: Բամբակենու ցանքերում վիլտի տարածվածության վերաբերյալ 1940 թվականին կատարված համատարած հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ մեր բամբակի հողամասերի 60,8<sup>0</sup>/<sub>10</sub>-ը վարակված է վիլտ հիվանդությունով, ըստ որում հիվանդ բույսերը հողամասերի վրա կազմել են 5,75<sup>0</sup>/<sub>10</sub>:

Ըստ առանձին շրջանների՝ բամբակի ցանքերի վարակվածությունը վիլտով՝ հետևյալ պատկերն է ավել (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Շրջաններ	Վարակված հողամասերի <sup>0</sup> / <sub>10</sub> -ը	Վարակված հողամասերում հիվանդ բույսերի <sup>0</sup> / <sub>10</sub> -ը
Հոկտեմբերյան . . . . .	78,5	9,15
Վաղարշապատ . . . . .	41,6	6,22
Ձանդիրասար . . . . .	34,8	5,55
Չամարու . . . . .	62,9	6,67
Վեդի . . . . .	78,9	4,38
Միջինը . . . . .	60,8	5,75

Ռոտավոր հաշվումները ցույց են տվել, որ 1940 թվին մենք վիլտի պատճառով կորուստ ենք ունեցել ոչ պակաս քան 3629 ցենտներ բամբակի հումուլթ, որը կազմում է ամբողջ բերքի մոտ 1,52<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Ըստ արտադրությունից մեջ մշակվող առանձին սորտերի կորուստն արտահայտվում է հետևյալ ձևով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Սորտ	Ընդհանուր կորուստը	Մեկ հեկտար վարակված հողամասի միջին կորուստը
0246	2222 ցենտ.	58,23 կգ.
915	1397 »	23,56 »

Բամբակենու 915 սորտին պատկանող ամեն մեկ հիվանդ բույսը միջին հաշվով կորցնում է իր բերքի 30—35%<sup>0</sup>-ը, իսկ 0246 սորտը՝ 53—60%<sup>0</sup>-ը:

Վիլսոն իջեցնում է բամբակի բերքի նաև որակահանց ցուցանիշները՝ թելի երկարությունը և ամրությունը, սերմերի բացարձակ քաշը, նրանց ծլունահուլթյունը, ծլման էներգիան և այլն: Այդ ուղղությամբ Միջին Ասիայում կատարված ուսումնասիրությունները ավել են հետևյալ արդյունքները (աղյուսակ 3):

**Աղյուսակ 3**

	Թելի հատկությունները		Սերմերի հատկությունները		
	Երկարությունը	Ամրությունը	Բացարձակ քաշը	Ծլունահուլթյունը	Ծլման էներգիան
Վիլսոն պատճառով նվազել է մինչև՝	11% <sup>0</sup>	26% <sup>0</sup>	9—17% <sup>0</sup>	11—20% <sup>0</sup>	11—31% <sup>0</sup>

ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՌԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր պայմաններում վիլսոն բամբակենու հասակավոր շրջանի հիվանդություն է և նրանով վա-

րակված առաջին բույսերը սովորաբար սկսում են նկատվել ծաղիկը սկզբին, իսկ այնուհետև նրանց քանակը մինչև վեգետացիայի վերջն աստիճանաբար ավելանում է: Դաշտում հիվանդ բույսերը հեշտությամբ աչքի են ընկնում իրենց արտաքին տեսքով: Վիլսոն նշանները նոր վարակված բույսերի վրա սովորաբար սկզբում արտահայտվում են ստորին տերևների վրա, որոնց ջղերի միջև դոյանում են դեղնահանաչավուն, գունատ բծեր: Որոշ ժամանակ անցնելուց հետո այդ բծերն աստիճանաբար մեծանում են, դորշանում ու չորանում: Չորանալու հետևանքով տերևները մասամբ կծկվում են և թափվում:

Հիվանդության նշաններն աստիճանաբար երևան են գալիս նաև բույսի միջին և վերին տերևների վրա, որի հետևանքով բույսը հաճախ բոլորովին տերևաթափ է լինում: Թափվում են նույնպես բամբակենու բերքատու օրգանները (կոկոնները, ծաղիկները, կնգուղները): Վիլսոն նշանները երբեմն մեծ արագությամբ են արտահայտվում բույսի բոլոր տերևների վրա և բուսացիորեն մի քանի օրվա ընթացքում այդ տերևները չորանում են: Հիվանդ բույսի ցուցանի

ընդլայնական թեք կտրվածքի վրա նկատվում են գորշ բծեր: Այդպիսի բծեր նկատվում են նաև ճյուղերի կտրվածքի վրա:



Նկ. 1. Վիլտի նշանները տերևի վրա (դեղնու-թյունն առանձին բծերի ձևով):




Նկ. 2. Վիլտի նշանները տերևի վրա (դեղնու-թյունն ընդգրկել է ամբողջ տերևը):

Նայած հողամասի վարակվածությունը և դե-տողություն ժամանակին, վիլտով հիվանդ բույ-ջ

սերը նկատվում են հատ-հատ, խմբերով կամ հա-մատարած ձևով: Եթե հողամասն ուժեղ է վա-րակված, ամռան կի-սին եղակի թվով նը-կատվող հիվանդ բույ-սերի քանակն աստի-ճանաբար ավելանա-լով՝ սեպտեմբերի վեր-ջերին կամ հոկտեմ-բերի սկզբին կարող է ընդգրկել ամբողջ հո-ղամասը: Երբեմն դըժ-վար է լինում ատոյժ բույսեր գտնել այդ-պիսի վարակված հո-ղամասերում:

Առհասարակ պարզ-ված է, որ ուժեղ վա-րակված հողամասե-րում հիվանդ բույսերն ավելի շուտ են երևան գալիս, քան թույլ վա-րակված հողամասե-



Նկ. 3. Վիլտի նշանները ցո-ղունի կտրվածքի վրա:

րում: Այս հանգամանքը կարևոր է հաշվի առնել գործնական տեսակետից, երբ մեզ հարկավոր է պարզել ցանքերի վարակվածության աստիճանը սերմացուի համար հողամասեր ընտրելու նպատակով: Այդ մասին խոսք կլինի հետագայում:

Ստորև բերում ենք 1941 թվին կատարված հաշվառման արդյունքները, որոնք ցույց են տալիս, թե մեկ հողամասում բամբակի 0246 սորաի վրա որքան հիվանդ բույսեր են երևան եկել:

Աղյուսակ 4

Հաշվառման ժամկետները	20—VII	30—VII	9—VIII	19—VIII	29—VIII	9—IX	19—IX	30—IX
Հիվանդ բույսերի 0/6-ը	1,2	4,0	13,0	14,8	20,3	33,2	39,3	42,4

Որքան բույսերը վաղ ժամկետում են հիվանդանում, այնքան նրանք բերքի ավելի մեծ կորուստ են ունենում: Սովորաբար վաղ ժամկետներում հիվանդացած բույսերը (հուլիսին, օգոստոսի I-ին կիսին) բոլորովին կորցնում են իրենց պտղատու օրգանները, գաճաճ են մնում ու մերկանում: Այդպիսի բույսերի վրա նորից առաջա-


նում են մանր, քլորոտիկ (գեղնած) տերևներ, բայց վերջիններս բերքի պահպանման համար որևէ դեր չեն կարող խաղալ, որովհետև այլևս բերքատու օրգաններ չեն առաջանում:

ՎԻՆՏԻ ՀԱՐՈՒՑԻՉԸ


Բամբակենու վրև առաջացնողը verticillium dahliae կոչվող սուսկն է, որը սովորաբար գրանրվում է վարակված հողամասում: Հողից պարզիտ սուսկը բույսի արմատների միջով թափանցում է նրա ջրատար անոթների մեջ և այնտեղից տարածվում է բամբակենու գանազան օրգաններում: Պարագիտ սուսկը գտնվելով բույսի հյուսվածքներում՝ օգտագործում է նրա սնունդը և առաջացնում հիվանդության վերը նկարագրված նշանները:

Պարագիտը հասարակ կազմություն ունի և իր զարգացման առաջին շրջանում բաղկացած է լինում բարակ, թափանցիկ հիֆերից (թելիկներից): Այդ հիֆերից առանձնացած հատուկ ճյուղավորությունների վրա առաջանում են սնկի սպորաները: Վերջիններս, ինչպես նաև հիֆերը, բարակաթաղանթ են և անբարենպաստ պայմաններում

երկար ժամանակ իրենց կենսունակությունը չեն կարող պահպանել: Այդ նրբաթաղանթ մասերից բացի, սունկն առաջացնում է հաստաթաղանթ բջիջներից բաղկացած գոյացումներ, որոնք կոչվում են սկլերոցիում:



Նկ. 4. Մնկի սպորակիր ճյուղավորությունները և սպորները:



Նկ. 5. Մնկի հաստաթաղանթ գոյացումները՝ սկլերոցիումները:

Հիվանդ բամբակենու հյուսվածքում սունկը սովորաբար լինում է թելիկների ձևով, իսկ հողում, վարակված բույսերի կամ այլ բույսերի մնացորդների վրա նա առաջացնում է հաստաթաղանթ բջիջներից բաղկացած սկլերոցիումներ: Վերջիններս ընդունակ են իրենց կենսունակությունը պահպանել մինչև  $30^{\circ}$  ցրտի և  $80^{\circ}$  ջերմության պայմաններում:

Մնկի զարգացման ամենապաստավոր ջերմաստիճան են հանդիսանում 19-ից 25-ը, մաքսիմումը՝ 30-ից 31-ը և մինիմումը՝ 6-ից 7-ը: Հողի խոնավության 20-ից 60% -ի սահմաններում սնկի սկլերոցիումները ծլում են, իսկ սնկի զարգացումն ուժեղանում է առատ խոնավության առկայության դեպքում:

Պարազիտի սկլերոցիումները գտնվում են հողի տարբեր շերտերում, նայած վարելաշերտի խորությանը, բայց ոչ ավելի խորը, քան վարելաշերտն է:

Բացի վերը նկարագրված սնկից, հիվանդ բույսի մեջ հաճախ պատահում են սնկերի ֆուզարիում (*Fusarium*) ցեղին պատկանող շատ տեսակներ (*Fusarium vasinfectum* և ուրիշներ),

որոնք մեր պայմաններում ի վիճակի չեն ինքնուրույն կերպով բամբակենու վիտը հարուցել, այլ նրանք բույսի մեջ են մտնում այն դեպքում, երբ նախադեռ նա վարակվել է վերաբերյալ լինումով:

Հիվանդության հարուցիչի վերաբերյալ վերը բերված փաստերը մեզ հարկավոր է իմանալ գործնական տեսակետից, հիվանդության դեմ մղվող պայքարի միջոցառումներ մշակելու, այն հիմնավորելու համար: Որովհետև մինչև որ մենք պարզ պատկերացում չունենանք հիվանդության հարուցիչի տեսակային կազմի, նրա կյանքի մասին, ապա մենք չենք կարող հիմնավորված, արդյունավետ պայքարի միջոցառումներ կիրառել:

Մեր բամբակագործական շրջաններում տարածված հիվանդության հարուցիչներին կազմի իմանալն անհրաժեշտ է նաև փորձի փոխանակման համար, մեր եղբայրական օգնություններում և օտար երկրներում պայքարի առաջարկվող միջոցառումները մեզ մոտ օգտագործելու համար: Պետք է նշել, որ ոչ բոլոր բամբակ մշակող երկրներում վիտի հարուցիչը միևնույն սուսնին է համարվում: Հյուսիսային Ամերիկայի

Միացյալ Նահանգներում, ուր առաջին անգամ հայտաբերվել է վիտ հիվանդությունը, մինչև այժմ էլ այնտեղի բամբակագործական շրջաններին մեծ մասում վիտի հարուցիչը համարվում է ֆուզարիում վազինֆեկտում սուսնը և համեմատաբար քիչ թվով նահանգներում՝ (Սրկանզաս, Միսսիսիպի, Կալիֆորնիա) վերաբերյալ լինումը:

#### ՎԻԼՏԻ ՓՈՆՍԱՆՅՈՒՄԸ ՏԱՐԵՅ-ՏԱՐԻ

Ինչպես նշվեց նախորդ գլխում, հիվանդությունն առաջացնող պարազիտ սուսնը վարակված հողից մտնում է բույսի արմատներին մեջ և ապա նրա ջրատար անոթների միջով տարածվում է բամբակենու տարբեր օրգաններում (ցողունում, ճյուղերում և այլն): Նայած թե ինչպիսի կլիմայական պայմաններում է կատարվում վարակումը և թե ինչպիսի սորտ է վարակվում՝ դիմացկուն, թե՞ վարակունակ, ըստ այնմ էլ տարբեր չափով է տարածվում պարազիտը բույսի զանազան մասերում: Ուղղեկատանի պայմաններում պարազիտը սովորաբար հասնում է բամբակենու ցողունի մինչև առաջին հանգույցը և ստորին ճյուղերը: Հայաստանի բամբակագործական շրջ-

Չանհերում նա տարածվում է բույսի ցողունի  
և ճյուղերի բոլոր մասերում, հասնում է ցողունի  
ծայրին և կնգուղակութեբին, բայց սերմերի  
մեջ չի մտնում: Դադստանի պայմաններում պա-  
րազիտը տարածվում է ոչ միայն բամբակենու  
բոլոր օրգաններում, այլև հասնելով սերմերին,  
առաջացնում է նրանց ներքին և արտաքին վա-  
րակվածութուն:

Բերված փոստերը միաժամանակ ցույց են  
տալիս, որ նայած տեղի պայմաններին՝  
հիվանդության տարեց-տարի փոխանցման ու-  
ղիները կարող են տարբեր լինել: Ուսումնա-  
սիրությունները ցույց են տալիս, որ Միջին  
Ասիայի պայմաններում և մեղ մոտ՝ Հայաս-  
տանում վիլտ հիվանդությունը սերմերի մի-  
ջոցով չի տարածվում: Ընդհակառակը՝ Դադս-  
տանում հիվանդ բույսերից ստացված սերմերը  
վիլտի տարածման գործում մեծ նշանակութուն  
կարող են ունենալ:

Սակայն չնայած այն հանգամանքին, որ մեր  
պայմաններում հիվանդության վարակը բամ-  
բակի սերմերի միջոցով չի փոխանցվում, այնու-  
ամենայնիվ այդ փաստը մեղ իրավունք չի տա-

1147  
42.  
( ) 13844-58

վիս վիլտով վարակված բույսերի հուշն ոգտա-  
գործել իբրև սերմացու, քանի որ նրա սերմային  
հատկությունները, ինչպես նշվեց վերը, ցածր  
են լինում առողջ բույսերի հնդի հետ համեմա-  
տած:

Վարակի փոխանցման գործում առանձնահա-  
տուկ դեր են խաղում դաշտում մնացած հիվանդ  
բույսերի մնացորդները: Արդեն նախորդ գլխում  
նշվեց, որ հիվանդություն հարուցող սուսկլը  
որոշ ձևափոխություններ կրելով՝ սկլերոցիում-  
ների վերածվելով, մեծ դիմացկունություն է ձեռք  
բերում միջավայրի անբարենպաստ պայմաններին՝  
ցրտի, տաքության և չորության հանդեպ: Պա-  
րազիտն օժտված լինելով այդպիսի հատկու-  
թյուններով՝ հեշտությամբ է ձմեռում վարակ-  
ված հողում՝ բերքահավաքից հետո դաշտում  
թողնված հիվանդ բույսերի մնացորդներում:  
Գարնանը պայմանները բարենպաստ լինելու  
դեպքում սնկի հաստաթաղանթ գոյացումները՝  
սկլերոցիումները ծլում են և սկսում են զարգանալ  
բամբակենու և այլ բույսերի կամ մոլախոտերի  
մնացորդների վրա: Այդ ձևով պարազիտը վա-  
րակված հողում իր կենսափոխությունը պահ-



պանում է մինչև տվյալ հողամասում բամբակի նոր ցանք կատարելը:

Ասվածից պարզ է դառնում, որ բերքահավաքից հետո բամբակենու մնացորդների հեռացնելը դրական արդյունք կտա վիտի հետագա զարգացման առաջին առնելու համար: Այդ են հաստատում Ուզբեկստանում դրված մի փորձի ստորև բերված արդյունքները (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

	Հաջորդ տարի վիտով հիվանդ բույսերի %-ը
Դաշտից բույսերի մնացորդներն արմատներով հեռացվել են . . .	35,2
Հողամասը վարվել է առանց բույսերի մնացորդները հեռացնելու	40,3

Քանի որ պարազիտ սունկն առաջին հերթին վարակում է բամբակենու արմատները և այնտեղից անցնում է բույսի վերերկրյա մասերին, ապա հասկանալի է, որ բերքահավաքից հետո մնացած բույսերի հեռացնելն արդյունավետ կզառնա այն գեպքում, երբ այդ կատարվում է արմատների հետ միասին: Ստորև բերվում են

Ուզբեկստանում դրված մի այլ համապատասխան փորձի արդյունքները (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

	Հաջորդ տարի վիտով հիվանդ բույսերի %-ը
Հեռացվել են բույսերի մնացորդները արմատներով . . . . .	28,3
Հեռացվել են միայն բույսերի վերերկրյա մասերը . . . . .	36,7

Ճիշտ է, առաջին հայացքից թվում է, թե ստացված տարբերությունը մեծ չէ, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հիվանդ բույսերի մնացորդների միջոցով պարազիտը հողում կուտակվում է տարիների ընթացքում, որը վերջիվերջո հասցնում է տվյալ հողամասի համատարած վարակվածություն:

ԱԳՐՈՏԵՆԻԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Այն հանգամանքը, որ վիտի հարուցիչ պարազիտ սունկը սովորաբար գտնվում է վարակված հողում և բույսը վարակվում է արմատների միջոցով, առանձին դժվարություններ է ստեղծում

ծում հիվանդութեան դեմ պայքարելու գործում: Այդ կապակցութեամբ ազրոտեխնիկական որոշ միջոցառումները պլանային կիրառումը թուլացնում է վիտի զարգացումը: Առաջին հերթին հիշատակենք պարարտանյութերի ազդեցութեանը:

Աղոտ պարունակող հանքային պարարտանյութերի գործածումը մասամբ թուլացնում է բամբակենու վարակվածութեան աստիճանը: Իսկ բամբակենին որքան թույլ չափով է վարակվում վիտով, այնքան ավելի պակաս է լինում հիվանդութեան պատճառած բերքի կորուստը:

Ստորև բերվում են պարարտացման այն փորձի արդյունքները, որ դրվել է Հայաստանում 1930 թվին:

### Աղյուսակ 7

Պարարտանյութ	Հիվանդությունների 0/0-ը	Որոշումների աստիճանով վարակված. 0/0-ը
Ամմոնիում սուլֆատ . . . . .	73,4	20,0
» սուլֆատ + սուպերֆոսֆատ	75,2	18,9
» » + կալիական աղ . . . . .	78,0	19,4
» » » » . . . . .		
+ սուպերֆոսֆատ . . . . .	75,1	16,5
Սուպերֆոսֆատ + կալիական աղ	84,2	25,3
Առանց պարարտացնելու . . . . .	80,6	26,8

Ելնելով ազոտային հանքային պարարտանյութերի վերոհիշյալ գրական հատկութուններից՝ հարկավոր է նրանցով առաջին հերթին պարարտացնել այն հողամասերը, որոնք ամենից շատ են վիտով վարակված:

Որոշ զգուշութեամբ է պահանջում վիտով վարակված հողամասերի պարարտացումը գոմաղբով, եթե վերջինս ինչպես հարկն է փոսած չէ: Բանն այն է, որ գոմաղբը թարմ վիճակում հարուստ լինելով կիսաքայքայված օրգանական նյութերի մնացորդներով՝ կարող է վիտով վարակված հողում իբրև սնունդ ծառայել պարագիտ սնկի համար և այդպիսով նպաստել նրա զարգացմանն ու բազմացմանը: Այդ պատճառով վիտով վարակված հողամասերը գոմաղբով պարարտացնելիս առանձին ուշադրութեամբ պետք է դարձնել, որ նա լինի փոսած:

Այժմ տեսնենք, թե տարբեր չափով ջրելը ի՞նչպիսի ազդեցություն կարող է թողնել վիտի զարգացման վրա: Հայտնի է, որ սնկային հիվանդութեանները մեծ մասամբ ուժեղ զարգանում են առատ խոնավութեան պայմաններում: Վիտի դեպքում, քանի որ հիվանդութեան հա-

բուցիչը գտնվում է հողում, ցանքը որքան հաճախակի ջրվի, այնքան ավելի կուժեղանա հիվանդության զարգացումը: Այդ են հաստատում Ուզբեկստանում վիլտով վարակված ցանքերի մասսայական հաշվառումները արդյունքները, որոնք բերվում են ստորև:

Ջրելու քանակը . . . . .	6	7	8
Վարակվածության միջին տոկոսը .	12,6	14,5	18,0

Սակայն մյուս կողմից սխալ կլինի վիլտի դեմ պայքարելու համար խորհուրդ տալ առհասարակ քիչ ջրել վարակված ցանքերը, դրանով մենք կպակասեցնենք բամբակենու բերքատվությունը, որովհետև բույսին պահանջածից քիչ ջուր տալով՝ կպակասի առողջ բույսերի բերքատվությունը:

Այս ուղղությամբ Ուզբեկստանում դրված փորձերը ցույց են տվել, որ եթե հողամասը վիլտով շատ ուժեղ չի վարակված և գտնվում է օրինակ՝ 16—22<sup>0</sup>/<sub>10</sub>-ի սահմաններում, վեգետացիայի ժամանակաշրջանում 6—7 անգամ ջրելը, չնայած մասամբ նպաստել է վիլտով հիվանդ բույսերի քանակի ավելացմանը՝ համեմատած 5 անգամ ջրվածի հետ, բայց և այնպես միաժամ

մանակ բարձրացրել է հողամասի ընդհանուր բերքատվությունը: Դա բացատրվում է նրանով, որ ջրման քանակի ավելացումով առողջ բույսերի բերքն այնքան է բարձրացել, որ նա ծածկել է հիվանդ բույսերի բերքի պակասորդը: Բայց ուժեղ վարակված հողամասերում, որտեղ հիվանդ բույսերի քանակը հավասար է առողջների քանակին կամ ավելի է, հաճախակի ջրելը կարող է իջեցնել ցանքի ընդհանուր բերքատվությունը:

Այս հանգամանքի վրա հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել հատկապես նրա համար, որ վիլտը չորացնում է բամբակենու տերևները և եթե ավյալ հողամասում հիվանդ բույսերի քանակը շատ է, ոչ լավատեղյակ մարդիկ այնպիսի սպալորտություն կարող են ստանալ, թե բույսերը չորանում են ջրի պակասության պատճառով: Ուստի վիլտով վարակված ցանքերը ջրելու ժամկետները որոշելու համար հարկավոր է առաջնորդվել առողջ բույսերի վիճակով և ջրել ըստ նրանց պահանջի:

Այժմ տեսնենք, թե ցանքի ժամկետները ինչպիսի ազդեցություն են թողնում վիլտի զարգացման վրա: Հայտնի է, որ բամբակենու բարձր

բերքատվութիւնն ապահովելու նախապայմաններէց մեկն էլ ցանքն օպտիմալ սեղմ ժամկետին կատարելն է: Սակայն իրրե բացասական երևույթ պետք է նշել, որ մեր մասսայական ժամկետին՝ ապրիլի 25-ին կատարված ցանքը մեծ չափով վարակվում է վիրտով (աղյուսակ 8): Ընդհակառակը՝ շատ ուշ ժամկետներին, օրինակ՝ հուլիս-օգոստոս ամիսներին կատարված ցանքը, որ գործնական արժեք չի ներկայացնում, անհամեմատ ավելի քիչ չափով է վարակվում վիրտով:

Աղյուսակ 8

Ցանրի ժամկետը (1931 թ.)	Վարակվածութիւն %օ-ը	Ցանրի ժամկետը (1931 թ.)	Վարակվածութիւն %օ-ը
25—IV	71,6	24—VI	58,9
6—V	70,8	15—VII	21,3
17—V	72,2	1—VIII	5,3

Աղյուսակում բերված փորձի արդյունքները միաժամանակ հաստատում են երկրորդ գլխում նշված այն փաստը, որ մեր պայմաններում վիրտը հասակավոր բամբակենու հիվանդութիւնն է և որ նա մատղաշ բամբակենուն չի վարակում:

Համենայն դեպս, անկախ վիրտի երևան գալուց, բամբակի բարձր բերք ստանալու համար չպետք է ձգձգել ցանքի ժամկետը և ցանքը վերջացնել ոչ ուշ, քան մինչև մայիսի մեկը:

ՎԻԼՏ ՀԱՐՈՒՑՈՂ ՍՆԿԻ ԲԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վիրտ հարուցող պարազիտ սունկը, բացի բամբակենուց, վարակում է նաև գյուղատնտեսական այլ բազմաթիվ կուլտուրաներ և վայրի բույսեր: Հայաստանի բամբակագործական շրջաններում վիրտի պարազիտը հայտարարվել է հետևյալ գյուղատնտեսական կուլտուրաների՝ խորդենու, կարտոֆիլի, բադրջանի, տաքտեղի, բամիայի և սիսեռի վրա: Որոշակի պարզված է, որ վիրտով չեն վարակվում առվույտը և հացաբույսերը: Վիրտով վարակվող վերոհիշյալ բույսերից խորդենին 1937 թվականից մուտք է գործել մեր բամբակագործական զոնան՝ հատկապես Հոկտեմբերյան շրջանը և հաջողութամբ մշակվում է: Կարտոֆիլի կուլտուրան նոր է մտցվում բամբակագործական շրջաններում, սակայն ոչ մի կռակած չկա, որ նա ևս հաջողութամբ կամրշակվի:

Այստեղ հարկավոր է ծանոթություն տալ այն մասին, թե բամբակագործական շրջաններում խորդենու և կարտոֆիլի մշակումն ինչ նշանակություն կարող է ունենալ բամբակենու վիլտի տարածման և զարգացման գործում, քանի որ նրանք վարակվում են այդ հիվանդությամբ:

ա) Խորդենու չորացումը կամ վիլտը. Այս հիվանդությունն առաջին անգամ հայտաբերվել է 1938 թվականին և այնուհետև ամեն տարի նրկատվել է ղզալի չափերով: Հիվանդությունը սովորաբար սկսում է երևան գալ հունիսի երկրորդ կեսից և աստիճանաբար տարածվում է մինչև վեգետացիայի վերջը:

Հիվանդ բույսերի ստորին առանձին ճյուղերի տերևները դեղնում ու չորանում են: Ուժեղ վարակվելու դեպքում ամբողջ բույսը չորանում է: Հիվանդ բույսերի ցողունների կտրվածքի փայտային մասը համատարած մարմնագույն է, մինչդեռ առողջներինը սպիտակ է: Սովորաբար հիվանդ բույսերի արմատները ֆլասաված չեն լինում, բայց պատահում են դեպքեր, երբ առանձին արմատիկները կամ երբեմն բոլոր արմատիկները մուգ գույնի և փտած են լինում:

Հիվանդությունն առաջացնողը, ինչպես վերն ասվեց, բամբակենու վիլտի հարուցիչն է, որը բույսի արմատների միջով հողից թափանցելով, տարածվում է նրա վերերկրյա օրգանների՝ ցողունի և ճյուղերի մեջ և սնվում է բույսի հաշվին: Վիլտով հիվանդ խորդենու արմատների փտումը երկրորդային երևույթ է, այսինքն, երբ բույսն արդեն վարակված է լինում վիլտի պարադիտ սնկով և մասամբ թուլանում է, նրա արմատների մեջ մտնում են սովորաբար հողում գտնվող սնկերի ֆուզարիում (Fusarium) ցեղին պատկանող տեսակները: Վերջիններս կրապարազիտային սնկեր են և նրանց մեծագույն մասն ինքնուրույն ձևով բույսերին չեն կարող վարակել:

Խորդենու չորացումը կամ վիլտը մեծ չափերով տարածված է Հոկտեմբերյանի շրջանում, որտեղ կատարված խորդենու դաշտերի համատարած հետազոտությունները ավել են հետևյալ արդյունքները (աղյուսակ 9):

Աղյուսակ 9

	հիվանդ բույսերի միջին %-ը	Լրիվ չորացած բույսերի %-ը
1939 թ. . . . .	18,4	4,7
1940 թ. . . . .	12,0	2,6

Միջին հաշվով կարելի է ընդունել, որ այդ հիվանդութեան պատճառով մենք կորցնում ենք խորդենու բերքի 5<sup>0</sup>/<sub>10</sub>-ը:

Բամբակենու վիտի տարածման և զարգացման դեմն առնելու տեսակետից խորդենու մշակութունը բամբակենու ցանքաշրջանառութեան մեջ բացասական դործոն է հանդիսանում: Խորդենին վիտով վարակվելով՝ բերքահավաքից հետո դաշտում թողնված նրա հիվանդ բույսերի մնացորդները կնպաստեն հողում վարակի կուտակմանը: Բացի այդ, հիվանդութունը տարեցտարի կարող է փոխանցվել վիտով վարակված կտրոնների միջոցով և այդպիսով վարակել մինչ այդ վիտից զերծ հողամասերը:

Որպեսզի վիտի պատճառած ֆուսսը խորդենուն և բամբակենուն միխիմումի հասնի, հարկավոր է խորդենին մշակել առաջին հերթին վիտից զերծ հողերում, բերքահավաքից հետո դաշտից հեռացնել բույսերի մնացորդները, կտրոններ վերցնել հիվանդութունից զերծ հողափորներից:

Եթե դաշտերում հիվանդութունն զգալի չափով է արտահայտվում, կազմակերպել վիտով

ուժեղ վարակված՝ չորացող բույսերի վաղաժամ բերքահավաք, 5-ից 10 օրյա ընդմիջումներով և բերքը հանձնել գործարանին վերամշակելու:

Վեգետացիայի ընթացքում հիվանդութունից բուրրովին ոչնչացած այն բույսերը, որոնք արդեն անպետք են դարձել հետագա վերամշակման համար, պետք է արմատահան անել և դաշտից հեռացնել:

բ) Կարտոֆիլի քառամուսը կամ վիտը. 1939 թվականից սկսած՝ մեզ մոտ մեծ աշխատանքներ են տարվում կարտոֆիլը բամբակագործական գոնայում մշակելու ուղղութեամբ, որին նպաստելու է թարմ պալարներով ամառային ցանքը: Այստեղ մենք կանգ չենք առնի թարմ պալարներով կարտոֆիլի ցանքի և մշակութեան այլ հարցերի վրա: Ընթերցողն այդ հարցերի լուսաբանումը կգտնի ահադ. Լիսենկոյի մեր մամուլում հրապարակված հոդվածներում, բրոշյուրներում և այլն: Մի բան պարզ է, որ կարտոֆիլը կարող է և պետք է մուտք գործի մեր բամբակագործական գոնայում. դրանով զգալի չափով կապահովվի ցածրադիր շրջանների աշխատավորութեան սննդի մատակարարումը:

Ինչ վերաբերում է կարտոֆիլի՝ վիլտով վարակվելուն, պետք է ասել, որ մասնադիտական գրահանության մեջ նշված մի շարք վաստերը հիմք էին ծառայում ենթադրելու, որ կարտոֆիլը մշակվելով բամբակագործական զոնայում, կարող է հիվանդանալ բամբակենու վիլտով: Եվ իսկապես, 1941 թվին կատարված ուսումնասիրությունում են այդ: Պարզվել է, որ բամբակի վիլտով վարակված հողամասերում, ուր 1941 թվի վարնանը կարտոֆիլ է ցանվել, նրա վրա երևան է եկել թառամում հիվանդութունը, որի հարուցիչն է եղել բամբակենու վիլտ առաջացնող պարզիտ սուսկը: Այդ սուսկը հայտաբերվել է նաև կարտոֆիլի հիվանդ բույսի պալարում: Հետևապես կարտոֆիլի հիվանդ բույսի պալարները վարակի փոխանցման միջոց կարող են հանդիսանալ:

Թե ինչ չափով կարտոֆիլի ցանքերը կհիվանդանան վիլտով մեր պայմաններում և ինչքան կտուփի կարտոֆիլի բերքը վիլտի ազդեծությունից — այդ հարցերի պատասխանները մենք առայժմ չունենք, սակայն, որպեսզի կար-

տոֆիլի պալարները հիվանդության վարակի տարածման միջոց չհանդիսանան և կատարված սխալների առաջ կանգնած չլինենք, հարկավոր է այժմվանից իսկ ձեռք առնել որոշ նախազգուշական միջոցներ:

Իրա համար անհրաժեշտ է, որ մեր կոլխոզները կարտոֆիլի համար հողամաս ընտրելիս առաջնորդվեն, բացի հողամասերի հողային պայմաններից, նաև նրանց վարակվածության աստիճանով, ելնելով 1940 թվին կատարված վիլտի հետազոտության տվյալներից: Սերմացուի համար կարտոֆիլ պետք է մշակել հատկապես այնպիսի հողամասերում, որոնք զերծ են վիլտից, իսկ այդպիսի հողամասեր կոլխոզներում քիչ չկան:

Բացի այդ, բերքահավաքի ժամանակ անհրաժեշտ է թառամած հիվանդ բույսերի պալարներն առանձին հավաքել և չօգտագործել ցանքի համար: Այդպիսի պալարներն արտաքուստ առողջ բույսերի պալարներից չեն տարբերվում, բայց իրենց մեջ սովորաբար կրում են հիվանդութուն հարուցող պարազիտին: Հիվանդ բույսերի պալարները կարող են օգտագործվել սննդի համար:

Իբրև ընդհանուր միջոցառում, կարտոֆիլի մշակության ղեպքում ևս բերքահավաքից հետո բույսերի մնացորդները դաշտից պետք է հեռացնել, որպեսզի վիրտի պարազիտի զարգացման համար նրանք իբրև սնունդ չծառայեն:

**ԱՌՎՈՒՅՏԻ ՑԱՆՔԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԻԼՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՆՎԱԶՅՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ**

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առվույտից ազատված հողամասերը համեմատաբար ավելի քիչ են վարակվում բամբակենու վիրտով, քան այն հողամասերը, որտեղ երկար ժամանակ մշակվում է բամբակենին: Դա հիմնականում բացատրվում է նրանով, որ առվույտը վիրտով չի վարակվում և պարազիտ սունկը սրնունդ չգտնելով՝ ոչնչանում է:

Հայաստանում 1940 թվականին կատարված վիրտի հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ առվույտին հաջորդող բամբակի ցանքերում վիրտի նվազումը կազմել է միջին թվով 32,5%, համեմատած այն հողամասերի հետ, որտեղ երեք և ավելի տարի անընդհատ բամբակ

է մշակվելիս եղել է ան առանձին շրջաններ լիտի նվազումը տվել է հետևյալ պատկերը (աղյուսակ 10):

**Աղյուսակ 10**

Շրջաններ	Վիրտի նվազումը %-ներով
Հոկտեմբերյան . . . . .	34
Ղամարու . . . . .	37
Վաղարշապատ . . . . .	16
Զանգիբասար . . . . .	53
Միջինը . . . . .	32,5

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ եթե մեր շրջանների առվույտի ցանքերը պատշաճ վիճակում լինեին, ագրոտեխնիկայի անհրաժեշտ միջոցառումներ կիրառելու շնորհիվ, վիրտը պակասեցնելու տեսակետից առվույտի ունեցած էֆեկտիվությունը կարտահայտվեր ոչ թե 32,5%-ով, ինչպես ցույց է տրված վերը, այլ թերևս ավելի մեծ չափով:

Բանն այն է, որ եթե առվույտի ցանքերը մաքուր չեն և վարակված են որոշ մոլախոտե-

բով, վերջիններս կարող են վարակվել վիրտի պարագիտ սնկով և այդպիսով նրա պահպանման միջոց հանդիսանալ առվույտի ցանքերում:

Առվույտի ցանքերի բերքատուրությունը բարձրացնելու, ցանքաշրջանառություն մեջ վիրտի դեմ պայքարելու տեսակետից նրա դեբը լիարժեք դարձնելու համար, անհրաժեշտ է առվույտի ցանքերում կիրառել ազրոտեխնիկայի պատշաճ միջոցառումներ: Առվույտի ցանքերի նոսր և մոլախոտերով վարակված լինելու ամենահիմնական պատճառներից մեկն է ցանքի վատ խնամքը գարնանը: Մեզ մոտ շատ հաճախ ուշացնում են առվույտի գարնան առաջին շուրջը, սովորաբար քիմիական պայքար չեն տանում ֆիտոնոմուսի դեմ, չնայած նրա բարձր էֆեկտիվություն, որի հետևանքով կորչում է ոչ միայն առվույտի առաջին բերքը, այլ նա առհասարակ նոսրանում է և տեղի է տալիս մոլախոտերի զարգացմանը: Այս դրուժյունը հանդուրժել չի կարելի: Մեզ մոտ բոլոր հնարավորությունները կան առվույտի ցանքերից լիարժեք բերք ստանալու համար, հարկավոր է միայն ինքնահոսի չմատնել այդ կուլտուրայի մշակությունը:

Բույսերի թառամումի բնույթ կրող հիվանդությունների առաջն առնելու համար, բացի պայքարի նախադուշական միջոցներից, երբեմն վարակված հողն ախտահանում են թունավոր նյութերով: Այդ մեթոդով պայքարը սովորաբար կիրառվում է ցանքից առաջ, որպեսզի մշակվող բույսը չտուժի թունավոր նյութից:

Բամբակենու վիրտի դեմ ևս կատարվել են հողի ախտահանման փորձեր, բայց այդ փորձերից և ոչ մեկը մինչև այժմ զոհացուցիչ արդյունքներ չի տվել: Արդեն հիշատակվեց այն մասին, որ բամբակենու վիրտի հարուցիչ սունկը իր զարգացման որոշ շրջանում հողում առաջացնում է այսպես կոչված սկլերոցիտոմներ՝ հաստաթաղանթ բջիջներից բաղկացած մարմնիկներ, այդ սկլերոցիտոմները մեծ դիմացկունություն են ցուցաբերում ոչ միայն միջավայրի անբարենպաստ պայմանների, այլ և թունավոր նյութերի հանդեպ:

Բամբակենու վիրտի դեմ փորձարկված մի շարք թունավոր նյութերից որոշ դրական ար-

դյուռնքներ տվել է քլորպիկրինը: Այդպիսի փորձ դրվել է 1934 թվին Ադրբեջանում, որի համառոտ արդյունքները բերում ենք №10 աղյուսակում:

Աղյուսակ 10

Մեկ քառ. մետր հողում մուծված քլորպիկրինի քանակը	Վիտի 0/0-ը
40 գր. . . . .	71,7
120 » . . . . .	55,9
2ի ախտահանված . . .	83,7

Ինչպես ցույց են տալիս ստացված ավյալները, վիտի տարածվածութունը ցանքում 83,7%֊ից մինչև 55,9%֊ի էջեցնելու համար ամեն մեկ քառ. մետրին պահանջվում է 120 գրամ կամ մեկ հեկտարին 1200 կիլոգրամ քլորպիկրին: Իսկ թե որքան է հարկավոր՝ հողում պարազիտ սունկը բոլորովին ոչնչացնելու համար — դրա մասին ավյալներ չկան. պետք է ենթադրել, որ գործնականում չափազանց դժվար է դրան հասնելը, մանավանդ որ հողի մեջ թունավոր նյութերը սովորաբար անհավասար են տարածվում: Հա-

մենայն դեպս, մինչև այժմ կատարված ուսումնասիրությունները հիմք չեն տալիս հուսալու, որ մոտ ժամանակներս հողի ախտահանումը վիտի դեմ պայքարելու ձեռնառու միջոց կարող է հանդիսանալ:

ՎԻՆՏԱԴԻՄԱՅԿՈՒՆ ՍՈՐՏԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Վիտի դեմ պայքարելու ամենաարմատական միջոցը պետք է համարել հիվանդության հանդեպ դիմացկուն և բերքատու սորտերի մշակումը: Երկարամյա փորձերը ցույց են տվել, որ բամբակենու սորտերը տարբեր չափով են վարակվում վիտով՝ կան դիմացկուն և վարակունակ սորտեր:

Հայաստանի պայմաններում կոլխոզային դաշտերում մշակվող երկու սորտերի՝ 915-ի և 0246-ի վիտով վարակվածության միջև խոշոր տարբերություն կա (աղյուսակ 11): Բամբակենու 0246 սորտը մոտ երկու անգամ ավելի շատ է վարակվում վիտով, իսկ վարակված բույսերն ավելի ուժեղ են ֆուսսվում, քան 915 սորտը:

Սակայն չնայած այն հանգամանքին, որ

0246 սորտը վիլտով ավելի շատ է վարակվում, քան 915 սորտը և վիլտով ուժեղ վարակված հողերում նրանից պակաս է բերք տալիս, այնուամենայնիվ լայն արտադրական պայմաններում այդ սորտը միջին հաշվով ավելի շատ բերք է տալիս, քան 915 սորտը: Իրա պատճառն այն է,

### Պոչտուսակ 11

Տարիներ	Վիլտով վարակվածության % -ը		Որից տեղաթափ եղած բույսերի % -ը	
	915	0246	915	0246
1930 թ. . . . .	37,3	83,9	5,9	35,6
1931 » . . . . .	45,9	91,0	3,1	22,8
1938 » . . . . .	43,3	91,3	7,9	51,5
1940 » . . . . .	48,0	86,4	11,0	31,1
Միջինը . . . . .	43,6	80,0	7,0	35,2

որ նախ՝ մեր բամբակամշակման շրջաններում վիլտով վարակված հողամասերի միջին վարակվածությունը շատ մեծ չէ (5,75%) և երկրորդ՝ 0246 սորտը համեմատած 915 սորտի հետ սովորաբար բերքատու լինելով, առողջ հողամասերում իր աված՝ առատ բերքով ծածկում է վիլտի պատճառած կորուստը և վերջին հաշվով 915-ից

ավելի շատ արդյունք է տալիս: Օրինակ՝ 1938 թվականին այդ տարբերությունը ռեսպուբլիկայում կազմել է հեկտարին 2,06 ցենտներ հումուլթ, իսկ 1939 թվին՝ 1,79 ցենտներ հումուլթ հողում: 0246 սորտի: Հասկանալի է, որ եթե 0246 սորտը վիլտի հանդեպ դիմացկուն լիներ, նրա միջին բերքատվությունն է՛լ ավելի բարձր կլիներ:

Հայաստանի Բամբակագործական Գիտահետազոտական կայանի առջև խնդիր է դրված՝ մեր պայմանների համար բուծել բամբակի այնպիսի սորտ, որն իր անտեսական հատկություններով՝ զերազանցի արտադրության մեջ մշակվող 0246 սորտին: Կայանն այդ տեսակետից զգալի աշխատանքներ է կատարում: Բացի իր բուծած սորտերից, նա մեր պայմաններում փորձարկում է նաև եղբայրական ռեսպուբլիկաների գիտահետազոտական հիմնարկների բուծած մի շարք սորտերը: Մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրություններից հետո հրնարավոր կլինի արտադրությանը տալ այս կամ այն սորտը, որն ի վիճակի կլինի փոխարինել

մեր արդյունաբերական սորտերին, հատկապես  
0246-ին:

ՅԱՆՔԵՐԻ՝ ՎԻՆՏՈՎ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Նախորդ գլուխներում մենք արդեն տեսանք,  
որ վիլտ հիվանդության դեմ պետք է պայքա-  
րել նախազգուշական ազրոտելնիկական միջո-  
ցառումներով: Որպեսզի պայքարի այդ միջոցա-  
ռումները հաջողությամբ կիրառվեն, անհրաժեշտ  
է, որ յուրաքանչյուր բամբակացան կոլխոզ  
ավյալներ ունենա այն մասին, թե արդյոք իր  
հողամասերը վիլտով վարակված են թե ոչ և եթե  
վարակված են, ապա ի՞նչ չափով: Ուստի հար-  
կավոր է բամբակի հողամասերը 2—3 տարին  
մեկ անգամ ռիստեմատիկաբար հետազոտության  
ենթարկել:

Կոլխոզն իր տրամադրության տակ ունենա-  
լով վիլտի տարածվածության վերաբերյալ սըվ-  
յալներ, նա տարբեր կուլտուրաներին հողամասեր  
հատկացնելու և առհասարակ ազրոտելնիկական  
ձեռնարկումները կիրառելու ժամանակ հաշվի

կառնի նաև առանձին հողամասերի՝ վիլտով վա-  
րակվածության աստիճանը: Վիլտի դեմ ուղղված  
այդ ձեռնարկումները հիմնականում հետևյալն  
են.

1. Առվույտի ցանքերի համար առաջին հեր-  
թին տրամադրվում են վիլտով ամենից ուժեղ  
վարակված հողամասերը:

2. Վիլտով ուժեղ վարակված հողամասերն  
առաջին հերթին են ստանում հանքային ազո-  
տային պարարտանյութեր, իսկ գոմաղբով պա-  
րարտացնելիս, վերջինս գործածվում է միմիայն  
լրիվ փտած վիճակում:

3. Այն անտեսություններում, ուր բամբա-  
կից զատ մշակվում են նաև կարտոֆիլ և խոր-  
դենի, վիլտով չվարակված հողամասերն առա-  
ջին հերթին հատկացվում են խորդենու և սեր-  
մացու կարտոֆիլին, որպեսզի կարտոֆիլի պա-  
լարների և խորդենու կտրոնների միջոցով հի-  
վանդությունը չփոխանցվի ուրիշ՝ վիլտով չը-  
վարակված հողամասերին:

Շրջանային օրգանները և Հողժողկոմաղբ  
վիլտի հետազոտության արդյունքներն օգտա-  
գործում են սորտերի շրջանացման ժամանակ,

եթե արտադրութեան մեջ մշակվում են մեկից ավելի սորտեր և նրանք տարբեր չափով են վերտով վարակվում (օրինակ՝ 915 և 0246 սորտերը): Այդ դեպքում վերտադրմացիուն սորտը տրվում է այնպիսի կոլխոզներին, որոնց հողամասերն ամենից շատ են վարակված վիրտով, միաժամանակ հաշվի առնելով նաև հողային մյուս պայմանները:

Վիրտի հետազոտութունը կատարում են կոլխոզային բրիգադիրները, ազբոտեխնիկները կամ պայքարի գծով աշխատողները: Հետազոտութեան վերաբերյալ կոնկրետ ցուցումներ նրանք ստանում են շրջհողբաժինների և ՄՏԿ-երի ազբուպեսոտնալից:

Բամբակի ցանքերում վիրտի հաշվառում ըստ հնարավորութեան պետք է ուշ կատարել, որպեսզի նրանում հիվանդութունն ավելի մեծ չափով արտահայտված լինի: Այդ տեսակետից մեր պայմաններում հարմար ժամանակամիջոց կարելի է համարել սեպտեմբերի երկրորդ կեսը:

Հետազոտութեան ժամանակ ամեն մեկ հողամասի ցանքի մեջ վերցնում են շախմատի ձևով դասավորված նմուշներ (շարքերում որոշ քա-

նակի բույսեր) և հաշվում են նրանցում եղած հիվանդ բույսերի քանակը և գրանցում են առանձին տետրակում\*): Ամեն մեկ նմուշում շարքի մեջ իրար հետևից հաշվառման ենթարկում են 10 բույս, իսկ նմուշների քանակը կախված է հողամասի մեծութունից:

Ամեն մեկ հեկտարին վերցնում են 10 նմուշ (100 բույս), օրինակ՝

Մինչև 1 հեկտար հողամասին	10 նմուշ,	ընդ. 100 բույս
» 2 »	» 20 »	» 200 »
» 3 »	» 30 »	» 300 »

և այլն:

Հետազոտութեան արդյունքները գրանցվում են տետրակում, որտեղ պետք է պատասխանել հետևյալ հարցերին (տես հարցաշուքակը):

\*) Եթե հետազոտման ենթակա բույսերը զննվել են չուից և դժվար է արտաբեր նշաններով իմանալ նրանց վիրտով վարակված լինելը, հարկավոր է նման բույսերի ստորին, անստուգ ճյուղերը դեպի ցած սեղմելով պոկել ցողունից և դիտել, եթե պոկված ճյուղի կեղևի տակ կամ միջուկային մասը գորշացած է, նշանակում է բույսը վիրտով հիվանդ է, իսկ եթե սպիտակ է՝ առողջ է:

**Հարցացուցակ բամբակի վիթի դաճեսային հեագոսության**

Բրիգադայի № 2 ..... Օղակի № 2 .....  
 Հոդամասի № ..... կամ անունը .....  
 Հոդամասի տարածությունը .....  
 Հետազոտության ամսաթիվը .....

Նմուշ-ների №№-ը	Հիվանդ բույսերի քանակը	Նմուշ-ների №№-ը	Հիվանդ բույսերի քանակը
1			
2			
3			
4			
5			

Հետազոտված բույսերի ընդհանուր քանակը...

Հիվանդ բույսերի քանակը . . . . .

Հիվանդ բույսերի %-ը . . . . .

Դաշտային հետազոտությունից ստացված ավյալներն ամփոփում են առանձին մատչանում, որը պարունակում է հետևյալ հարցերի պատասխանները (տե՛ս ամփոփագիրը):

**Վիթի հեագոսման արդյունքների ամփոփագիրը**

Կոլտոգի անունը *Միլիտարի 24 Հունիս*  
 Հետազոտման տարին *15*

Բրիգադայի №-ը	Օղակի №-ը	Հոդամասի №-ը կամ անունը	Տարածությունը	Վիթով վարակվածության %-ը

Բամբակենու ցանքերի հետազոտման մեթոդով պետք է հաշվի առնել նաև խորդենու չորացումի տարածվածությունը, ըստ որում ամենից լավ է այն կատարել բերքահավաքից 5—10 օր առաջ, երբ հիվանդությունն ամենից շատ է արտահայտված լինում:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՅԱՆՔԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ  
ԱՊՐՈՒԲԱՅԻԱՆ

Բամբակենու լավորակ սերմացու մթերելու համար կատարվում է ցանքերի դաշտային ապրորացիա (գնահատում), որի շնորհիվ ընտրվում են այնպիսի ցանքեր, որոնք մաքուր են սորտայնության տեսակետից, չեն տուժել ֆլասսատուններից և հիվանդություններից ու բարձր բերք են խոստանում:

Ճիշտ է, բամբակենու վիլտ հիվանդությունը սերմերով չի փոխանցվում, սակայն քանի որ հիվանդ բույսերի սերմային հատկություններն առհասարակ ընկնում են, անհրաժեշտ է սերմացու վերցնել առողջ հողամասերից, իսկ եթե այդպիսիներից ստացված բերքը չի բավարարում սերմի ամբողջ պահանջը, ապա մնացորդը պետք է լրացնել վիլտով համեմատաբար քիչ վարակված ցանքերից ստացված բերքով:

Ահա այդ աշխատանքը պլանավորելու համար է, որ բերքահավաքից առաջ կատարվում է ցանքերի ապրորացիա և ստացված տվյալների հիման վրա միատեսակ հողամասերից հավաքված բերքն

առանձին խմբավորելով՝ սերմը դաման են ենթարկում:

Դաշտային ապրորացիան կատարվում է ապրոպրեսոնալի կողմից և միայն մեկ անգամ, ըստ որում դաշտային աշխատանքները պետք է վերջացնել մասսայական բերքահավաքից 10 օր առաջ, որպեսզի հնարավոր լինի ստացված նյութերն ամփոփել և նրանցով առաջնորդվել բերքահավաքի ժամանակ: Չպետք է ձգձգել ապրորացիայի աշխատանքները, այլապես՝ հնարավոր չի լինում ստանալ այնպիսի տվյալներ, որոնցով կարելի լինի համեմատել հետազոտման սկզբի և վերջին օրերին հաշվի առնված հողամասերի վարակվածության տոկոսները, որովհետև վիլտով վարակված բույսերի քանակը մինչև վեգետացիայի վերջն աստիճանաբար ավելանում է: Այդ պատճառով ապրորացիոն աշխատանքները կատարում են կարճ ժամանակամիջոցում՝ ամենաուշը 10—15 օրում:

Ապրորացիայի ժամանակ վիլտի հաշվառումը կատարվում է հետևյալ ձևով: Եթե հողամասերը ցանված են առաջին ռեպրոդուկցիայի սերմերով, ապա ամեն մի հեկտարից վերցնում են շախմա-

տի ձևով դասավորված 50 նմուշ՝ ամեն մեկ նըմուշը բաղկացած 10 բույսից, և որոշում են, թե այդ բույսերից քանիսն է վարակված վիրտով: Ստացված արդյունքը գրանցում են հատուկ հարցաթերթում, որի ձևը մենք այստեղ չենք բերում:

Երկրորդ և մնացած ռեպրոդուկցիայի սերմերով կատարված ցանքերում նմուշների քանակը պահպանում են մինչև 25-ի, իսկ ամեն մի նըմուշի բույսերի քանակը մնում է նույնը՝ այսինքն՝ 10 հատ: Այդպիսով առաջին դեպքում յուրաքանչյուր հեկտար ցանքին հաշվառման ենթարկում են 500 բույս, իսկ երկրորդ դեպքում՝ 250 բույս:

Վիրտի տարածման աստիճանի համաձայն՝ ցանքերն այս կամ այն լսմբի մեջ դասելու համար իբրև միավոր տարածութուն են ընդունում՝ առաջին ռեպրոդուկցիայի համար մեկ հեկտար, իսկ երկրորդ և մնացած ռեպրոդուկցիաների համար՝ մեկ օղակի հողամասը, եթե վերջինս չի բաժանված իրարից հեռու ընկած հողակտորների, այլապես ամեն մեկ հողակտորի սպորացիան առանձին է կատարվում:

Նայած վիրտով վարակվածության աստիճա-

նին՝ սերմացուի համար ընտրվող բամբակի ցանքերը բաժանվում են 3 լսմբի՝

I. առողջ ցանքեր.

II. վիրտով վարակվածությունը հասնում է մինչև 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ի.

III. վիրտով վարակվածությունը հասնում է մինչև 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ի:

Այն ցանքերը, որոնք ապրոբացիայի ժամանակ վիրտով 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ից ավելի շատ են վարակված, սերմացուի համար խոտանվում են և նրանցից ստացված հունդն օգտագործվում է սնտեսական նպատակների համար (ձեթի, օձառի, գլիցերինի և այլն):

Սերմացուի համար ընտրված՝ վիրտով վարակված ցանքերի բերքը հավաքելիս հարկավոր է հիվանդ բույսերի հումուսից առանձին ժողովել և խոտանել իբրև սերմացու: Այդ աշխատանքն առանձին դեֆարուություն չի ներկայացնում, հարկավոր է միայն գիտակից և ուշադիր վերաբերմունք ունենալ դեպի աշխատանքը: Առհասարակ վիրտով հիվանդ բույսերը մինչև ցըրտահարվելն իրենց արտաքին տեսքով առողջներից հեշտությամբ տարբերվում են և ամեն մի

կոլլոսոզնիկ կարող է հիվանդ բույսերի բերքն առանձին տեղավորել գոգնոցի կամ բերքահավաքի համար գործածվող պարկի մեջ:

Էլիտային ցանքերը վիլտի վարակվածության տեսակետից ապրորացիոն լամբերի չեն ենթարկվում: Էլիտում սերմացու մատերիալ վերցնում են բացառապես առողջ բույսերից: Վիլտով վարակված բույսերից հավաքված հումուլթը անպետք է սերմացուի համար:

Որպեսզի էլիտային մատերիալի կորուստ տեղի չունենա, հարկավոր է նրա ցանքերին հատկացնել առողջ հողամասեր:

#### ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1. Վիլտի դեմ պայքարելու հիմնական միջոցառում է՝ հիվանդության հանդեպ դիմացկուն՝ առվույտի և հացաբույսերի մշակումը բամբակի ցանքաշրջանառության մեջ:

2. Առվույտի ցանքերի համար առաջին հերթին հատկացնել վիլտով խիստ վարակված հողամասերը, որպիսի աշխատանքը սլանալորելու համար օգտագործել կոլլոսոզների առանձին հողամասերի հետագոտման արդյունքները:

3. Սերմացու կարտոֆիլի ցանքերի համար հատկացնել վիլտից զերծ հողամասերը, իսկ սերմացու կարտոֆիլի այն ցանքերում, ուր հայտարերված է թառամում հիվանդությունը, հիվանդ բույսերի պալարներն առանձին հավաքել և օգտագործել պարենի համար:

4. Որդեհնու մշակության համար հատկացնել առաջին հերթին վիլտից զերծ հողամասերը: Կտրոնները պատրաստել առողջ հողակտրոններում:

5. Որդեհնու դաշտերում վիլտի զգալի չափերով երևան դալու դեպքում կազմակերպել ուժեղ վարակված՝ ամբողջապես չորացող բույսերի վաղաժամ բերքահավաք՝ 5-ից 10 օրյա ընդմիջումներով:

6. Վիլտով խիստ վարակված բամբակի հողամասերին հանքային ազոտային պարարտանյութեր հատկացնել առաջին հերթին:

Ուսասփիլ խիստ վարակված հողամասերի մեջ գոմաղը մտցնելուց կամ ծայրահեղ դեպքում գոմաղը մտցնել լավ փտած վիճակում:

7. Բամբակի սերմացուի ցանքերի բերքը հա-

վաքելիս վիւտով հիվանդ բույսերի հումուլթը հավաքել առանձին և չօգտագործել սերմի համար:

8. Վիւտի հարուցիչի քանակը հողում նվազեցնելու համար հարկավոր է ամեն տարի կիրառել հետեյալ միջոցառումները.

ա) Բամբակենու, ինչպես նաև խորդենու բերքահավաքից հետո դաշտից հեռացնել բույսերի մնացորդներն արմատներով և փխադրել տնտեսություն՝ իբրև վառելիք օգտագործելու համար:

Դաշտից հեռացնել բույսերի մնացորդները նաև կարտֆիլի բերքահավաքից հետո:

բ) Վեգետացիայի ընթացքում հիվանդության պատճառով խորդենու ոչնչացած բույսերը, որոնք չեն օգտագործվելու գործարանային վերամշակման համար, արմատահան անել և հեռացնել դաշտից: Հեռացնել նաև վաղաժամ բերքահավաքի ենթարկված հիվանդ բույսերի մեռած մնացորդները:

գ) Գարնանը հողի նախացանքային մշակման ժամանակ հավաքել և դաշտից հեռացնել բամբակի և այլ բույսերի բոլոր մնացորդները:

9. Առվույտի ցանքերի բերքատուլությունը

բարձրացնելու, բամբակենու ցանքաշրջանառության մեջ նրա դերը վիւտի դեմ պայքարելու տեսակետից լիարժեք դարձնելու նպատակով, քիմիական պայքար մղել առվույտի թրթուրի (Ֆիտոնոմուսի) դեմ և չուշացնել վեգետացիոն առաջին ջուրը:

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**

էջ

Վիլա հիվանդության տարածվածությունը և նրա պատ- ճառած տնտեսական վնասը . . . . .	3
Հիվանդության արտաքին նշանները և զարգացման ա- ռանձնահատկությունները . . . . .	6
Վիլտի հարուցիչը . . . . .	11
Վիլտի փոխանցումը տարեց-տարի . . . . .	15
Ազրոտեխնիկական մի քանի միջոցառումների ազդեցու- թյունը վիլտի զարգացման վրա . . . . .	19
Վիլտ հարուցող սնկի բաղմակերությունը . . . . .	25
ա) խորդենու չորացումը կամ վիլտը . . . . .	26
բ) կարտոֆիլի թառամումը կամ վիլտը . . . . .	29
Առվույտի ցանքերի նշանակությունը վիլտի զարգա- ցումը նվազեցնելու գործում . . . . .	32
Հողի ախտահանումը վիլտի դեմ . . . . .	35
Վիլտազիմացիուն սորտերի մշակումը . . . . .	37
Ցանքերի՝ վիլտով վարակվածության հետազոտումը . . . . .	40
Բամբակենու ցանքերի դաշտային տվրորացիան . . . . .	46
Պայքարի միջոցառումների ամփոփումը . . . . .	50



А. А. БАБАЯН  
**ВИЛТ ХЛОПЧАТНИКА**  
 (на армянском языке)  
 Армгиз, 1942, Ереван

Պատ. խմբագիր՝  
 Ջ. Գ. Սուլջյան

ՎՅ 2224. Պատվեր 278. Տիրաժ 1000. Տպագրա-  
 կան 3 1/2 մամ. Հեղին. 1,20 մամուլ. Մեկ մամու-  
 լում 17280 նշան. Ստորագրված է տպագրու-  
 թյան համար 5/Մ-42 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

7287

2013

« Ազգային գրադարան



NL0079642

208,

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.